# 2009-2010 ԹՈՒԱԿԱՆԻ PTA-ի «ՌԵՖԼԵՔՇՆ» ԾՐԱԳՐԻ ԱՇԱԿԵՐՏԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

Մասնակցութեան ընդհանուր կանոններից բացի, աշակերտը պէտք է հետևի նաև գեղարուեստական իւրաքանչիւր բնագաւառի որոշակի կանոններին։

---

**2009-2010 ծրագրի թեման է՝ «Գեղեցկութիւնը...»։ Ընդունելի են միայն այս թեմայով ոգեշնչուած գեղարուեստական նոր աշխատանքներ։**

## ԱՇԱԿԵՐՏԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹԵԱՆ ՀՆԱՐԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ PTA-ի ՄԻՋՈՑՈՎ

Աշակերտը պէտք է «Ռեֆլեքշն» ծրագրին մասնակցի PTA/PTSA խորհրդի միջոցով։ Տեղական այն խմբերը, որոնք չեն անդամակցում Համերկրային PTA-ին, պայմանները չեն լրացնում այս ծրագիրը հովանաւորելու համար։ Նահանգի ու տեղական PTA/PTSA-ի պատասխանատուութիւնն է որոշելու իւրաքանչիւր աշակերտի ընդունելիութիւնը «Ռեֆլեքշն» ծրագրում։ Աշակերտը կարող է իր աշխատանքը մշակել դպրոցում կամ դպրոցից դուրս։

## ԴԱՍԱՐԱՆԱՅԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՆԵՐ

Աշակերտը կարող է «Ռեֆլեքշն» ծրագրին մասնակցել իր դասարանի մակարդակի համապատասխան բաժանմունքով։ Բաժանմունքները հետևեալներն են՝

- Տարրականի ցածր դասարան՝ Նախակրթարան-2-րդ
- Տարրականի բարձր դասարան՝ 3-5-րդ
- Նախամիջնակարգ՝ 6-8-րդ
- Միջնակարգ՝ 9-12-րդ

Եթէ աշակերտները չեն համընկնում դասարանային որոշակի բաժանմունքի, համերկրային PTA-ը կառաջարկի, որ նրանք խմբաւորուեն հետևեալ կարգով՝

- Տարրականի ցածր դասարան՝ մինչև 7 տարեկան
- Տարրականի բարձր դասարան՝ 8-10 տարեկան
- Նախամիջնակարգ՝ 11-13 տարեկան
- Միջնակարգ՝ 14+ տարեկան

Տեղական PTA/PTSA-ի պատասխանատուութիւնն է, որ անհրաժեշտ պարագայում համապատասխան բաժանմունք որոշի։

## ԱՐՈՒԵՍՏԻ ԲՆԱԳԱՒԱՌՆԵՐ

Աշակերտը կարող է արուեստի հետևեալ չորս բնագաւառներից որևէ մէկում իր աշխատանքները ներկայացնել՝

- Պարի ձևաւորում
- Կինոժապաւէնի արտադրութիւն
- Գրականութիւն
- Երաժշտական կոմպոզիցիա
- Լուսանկարահանում
- Տեսողական արուեստ

Համերկրային PTA-ը չի սահմանափակում աշակերտի կողմից ներկայացուող աշխատանքների թիւը։

## ԻՆՔՆՈՒՐՈՅՆՈՒԹԻՒՆ

Իւրաքանչիւր աշխատանք պէտք է լինի միայն մէկ աշակերտի ինքնուրոյն աշխատանքը։ Ծնողը չի կարող վերափոխել աշակերտի ստեղծագործական աշխատանքը։ Քանի որ ծրագիրը նախագծուել է իւրաքանչիւր աշակերտի անհատական ստեղծագործութիւնը ճանաչելու և խրախուսելու, ուստի չի թոյլատրւում չափահասի կողմից որևէ օգնութիւն կամ այլ աշակերտների հետ համագործակցութիւն։ Գեղարուեստական իւրաքանչիւր աշխատանքի համար միայն մէկ աշակերտ պէտք է պարգևատրուի։ Ուրիշ անձեր կարող են երևալ աշակերտի գեղարուեստական աշխատանքի մէջ, սակայն աշխատանքն ինքնին, լինի դա՝ պարի ձևաւորումը կամ կինոժապաւէնի արտադրութիւնը (ներառեալ կինոֆիլմի տեքստը, ապարատային աշխատանքը և ռեժիսորութիւնը), կամ երաժշտական յօրինումները (ներառեալ գրաւոր յօրինումները և ձայնագրութիւնը) և այլն, պէտք է միայն մէկ աշակերտի աշխատանքը լինի։ (Տես իւրաքանչիւր գեղարուեստական բնագաւառի կանոնները)։

Արգելուած է հեղինակային իրաւունքով նիւթերի օգտագործումը (բացի պարի ձևաւորման և կինոժապաւէնի ընթացքում ձայնագրուած երաժշտութիւնը)։ Սա ներառում է հեղինակային իրաւունքով մուլտիպլիկացիայի տիպարների կամ նման այլ նիւթերի օգտագործումը։

***Գրագողութիւն*** նշանակում է՝ վերցնել ու օգտագործել մի ուրիշի գաղափարները կամ գրութիւնները կամ ստեղծագործութիւնները և ներկայացնել, որպէս անձնական աշխատանք։ Գրագողութեամբ կատարուած աշխատանքներն անընդունելի են և կը վերադարձուեն աշակերտին։

## ԱՇԱԿԵՐՏԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԴԻՄՈՒՄՆԱԳԻՐ

Բոլոր մասնակցողներից պահանջւում է ամբողջապէս լրացնել ու ստորագրել Աշակերտի մասնակցութեան դիմումնագիրը: Մասնակցութեան դիմումնագիրը չլրացնելու դէպքում, աշակերտը չի կարող մասնակցել ծրագրին: Միայն այն պարագայում, երբ երեխան չի կարող դիմումնագիրը լրացնել կամ ընթեռնելի ձեռով գրել, ծնողը կարող է լրացնել դիմումնագիրը:

Աշակերտը կարող է իր աշխատանքի համար վերնագիր կամ անուն որոշել: Եթէ աշխատանքը վերնագիր կամ անուն ունի, դա պէտք է ներառւի աշակերտի դիմումնագրի մէջ: Եթէ աշխատանքը վերնագիր կամ անուն չունի, խնդրում ենք գրել «Անվերնագիր կամ անանուն»: Բոլոր աշխատանքները պէտք է ներառեն արտիստի յայտարարութիւնը՝ բացատրելով, թէ ինչպէս է այդ աշխատանքը կապւում թեմային: Գեղարւեստական գրեթէ բոլոր աշխատանքների համար պահանջւում է, որ աշակերտը պատասխանի մի քանի հարցերի, թէ ինչպէս է յօրինել իր ստեղծագործութիւնը: Տես դիմումնագրի պահանջւած տեղեկութիւնների բաժինը:

## ՊԱՀԱՆՋՒՈՒՄ Է ԱՐՏԻՍՏԻ ԿՈՂՄԻՑ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Իւրաքանչիւր մասնակցողից պահանջւում է բացատրել, թէ ինչպէս է նա ներշնչւել յօրինելու իր ստեղծագործութիւնը և ինչպէս է դա կապւում թեմային: Արտիստի բացատրութիւնը պարտադրական է բոլոր դասարանների մասնակցողների համար: Բացատրութիւնը չպէտք է 250 բառից աւելի շատ լինի, բայց չի սահմանւում նւազագոյն չափ: Աշակերտի դիմումնագրի մէջ տեղ է յատկացւում արտիստի բացատրութեան կամ յայտարարութեան համար: Բաւարար տեղ չլինելու պատճառով կարելի է գրել առանձին թերթիկի վրայ և դա կցել աշակերտի դիմումնագրին: Ուշադիր եղէք, որ աշակերտի անունը գրւի բոլոր թերթիկների վրայ, որոնք կցւում են դիմումնագրին:

## ԴԺՒԱՐՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ

PTA-ը համոզւած է, որ դժւարութիւն ունեցող աշակերտին պէտք է տրամադրել անվճար ու համապատասխան հանրային ուսուցում: Այնուամենայնիւ, համերկրային մակարդակով «Ռեֆլեքշն» ծրագիրը չունի որևէ յատուկ բաժանմունք՝ դժւարութիւն ունեցող աշակերտների համար: Համերկրային PTA-ը համոզւած է, որ ծնողի իրաւունքն է իր զաւակին տեղաւորել «Ռեֆլեքշն» ծրագրի դասարանային այն բաժանմունքում, որը լաւագոյնս կարտացոլի երեխայի զարգացումային տարիքը: Այնուամենայնիւ, նահանգի և տեղական «Ռեֆլեքշն» ծրագրերի ուղղութիւնները տարբերւում են: Ուղղութիւնների համար դիմէ՛ք ձեր նահանգային PTA-ին:

## ԺԱՄԿԷՏ

Իւրաքանչիւր աշակերտ իր աշխատանքը պէտք է ներկայացնի իր տեղական PTA/PTSA կողմից նշանակւած ժամկէտով: Ծրագիրը հովանաւորող իւրաքանչիւր տեղական PTA/PTSA կը որոշի աշխատանքները ներկայացնելու ժամկէտը՝ նահանգի, կրթաշրջանի ու խորհրդի կարիքների համաձայն: Այն աշխատանքները գնահատւում են տեղական մակարդակով և ապա ընտրւած աշխատանքները ներկայացւում են գնահատման յաջորդ փուլի համար (խորհրդի, կրթաշրջանի կամ նահանգի մակարդակով): Ժամկէտի կամ կանոնների մասին ձեր հարցերն ուղղէք ձեր նահանգի PTA-ին կամ նահանգի արւեստների նախագահին: Համերկրային PTA-ը չի գրանցում ժամկէտները տեղական, խորհրդի, կրթաշրջանի կամ նահանգի մակարդակով PTA-ների համար:

## ԳՆԱՀԱՏՈՒՄ

Համերկրային մակարդակով բոլոր աշխատանքները գնահատւում են տիպիկութեան, ինքնուրոյնութեան գոյների իմաստութեան ու թեմայի մեկնաբանութեան հիման վրայ: Համերկրային «Ռեֆլեքշն» ծրագրում գոյների իմաստութիւնը կապւում է աշակերտի գեղարւեստական ստեղծագործութիւններում ցուցաբերած հիմնական սկզբունքների/տեխնիկաների իմաստութեան մակարդակին: Այնուամենայնիւ լաւ մշակւած գաղափարը շատ աւելի կարևոր է քան օգտագործւած տեխնիկաները: Աշխատանքները հիմնականում կը գնահատւեն, թէ ինչպէս է աշակերտը իր արտիստիկ մտապատկերն օգտագործել թեման դրսևորելու համար:

«Ռեֆլեքշն» ծրագիրը չունի աշխատանքի բովանդակութեան կամ նիւթի վերաբերեալ որևէ սահմանափակում: Այն ծրագրին մասնակցող աշակերտները պէտք է բաւարարեն դպրոցի, տեղական կամ նահանգային PTA-ի չափանիշները:

Իւրաքանչիւր PTA ինքն է որոշում իր ուրոյն ժիւրիները: Ծնողները կամ աշակերտները ոչ մի ձևով չեն կարող կապւել ժիւրիների հետ վիճելու որևէ աշխատանքի մասին: Ժիւրիների բոլոր որոշումները վերջնական են:

# 2009-2010 ԹՈՒԱԿԱՆԻ PTA-Ի «ՌԵՖԼԵՔՇՆ» ԾՐԱԳՐԻ
# ՊԱՐԻ ՁԵՒԱՒՈՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

**Մասնակցութեան ընդհանուր կանոններից բացի, աշակերտները պէտք է հետևեն նաև պարի ձեւաւորման հետևեալ կանոններին՝**

---

## ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Պարի ձեւաւորման աշխատանքները պէտք է լինեն ինքնուրոյն ստեղծագործութիւններ ձայնագրուած DVD-ի կամ CD-ի վրայ: Պարի ձեւաւորումը պէտք է լինի մէկ աշակերտի աշխատանք և դրսևորի Ռեֆլեքշն ծրագրի ներկայ թեմայի մեկնաբանութեամբ աշակերտի իւրօրինակ աշխատանքը: Առաջարկւում է, որ արուեստի բացատրութիւնը կամ յայտարարութիւնը լինի ձայնագրման սկիզբը, ի յաւելումն աշակերտի դիմումնագրի գրաւոր յայտարարութեան:

Պարը կարող են մինչև երեք պարողներ ներկայացնել: Պարուսոյցը, թէև ոչ անպայման, բայց կարող է պարողներից մէկը լինել: Տարազ հագնելու կարիքը չկայ, իսկ եթէ տարազ է հագնւում, դա ևս պէտք է պարուսոյցի ինքնուրոյն աշխատանքը լինի կամ յայտարարի, որ տարազները իր ուրոյն աշխատանքը չեն:

Թէ պարզ և թէ բազմատեսակ տեխնիկաներից օգտուելու պարագաներում, աշխատանքները հիմնականում գնահատուելու են, թէ ինչպէս է աշակերտը թեմայի նկարագրութեան համար օգտուել իր արուեստի մտապատկերից: Լաւ մշակուած գաղափարը շատ աւելի կարևոր է քան օգտագործուած տեխնիկաները: Ուստի շատ կարևոր է, որ աշակերտը ցոյց տայ պարի ձեւաւորման և թեմայի միջև յստակ կապակցութիւնը: Կապակցութիւնը պէտք է դրսևորուի երգի, բեմայարդարանքների կամ ինքը պարի միջոցով:

***Աւանդական պար***

Աւանդական պարի ինքնուրոյնութիւնը և տիպիկութիւնը գնահատելու համար նկատի է առնւում փուլերի փոփոխութիւնը և պարի մեկնաբանութիւնը: Աւանդական մշակոյթով պարի ձեւաւորման պարագայում պարի սկզբնաղբիւրի բացատրութիւնը և կամ ձեւաւորման արտայայտչութեան առանձնութիւն կարող է համարուել արուեստի յայտարարութեան մէջ:

## ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

- Տեւողութիւնը չպէտք է երեք րոպէից աւելի լինի:
- Պարի ձեւաւորումը պէտք է ուղղակի կապակցուի թեմային:
- Ներկայացրէք պարի ձեւաւորման երկու (2) CD կամ DVD:
- Չի պահանջւում, որ պարուսոյցը լինի պարողներից մէկը:
- Խնդրւում է արուեստի յայտարարութիւնը ձայնագրել ձայնագրման սկիզբը (արուեստի յայտարարութիւնը մաս չի կազմում ներկայացման համար նկատի առնուած երեք րոպէին):

## ՖՈՐՄԱՏ (Չափը և ձևը)

- Կատարումները պէտք է ունենան հետևեալ ֆորմատներից մէկը՝
  - .MPG / .MPEG
  - .MOV / .QT (Quicktime Video)
  - .WMV (Windows Media Video)
- Ձայնագրուած կատարումը պէտք է որպէս CD/DVD file ներկայացուի, այլ ոչ թէ որպէս CD/DVD movie:
- Դնել երկու (2) CD կամ DVD պլաստիկէ կամ խաւաքարտէ տուփի մէջ և վրան գրել աշակերտի անունը, դասարանը, նահանգը և տարեթիւը:
- Երկու (2) CD/DVD-ները դնել մեծ ծրարի մէջ:
- Աշակերտի մասնակցութեան դիմումնագիրը դնել թափանցիկ պահպանակի մէջ և դա masking tape-ով փակցնել ծրարի վրայ:
- Ներառել ստեղծագործութեան վերնագիրը կամ անունը և արուեստից պահանջուած յայտարարութիւնը դիմումնագրի մէջ: Եթէ ստեղծագործութիւնը վերնագիր կամ անուն չունի գրել «անվերնագիր կամ անանուն»:

**Յանձնարարութիւններ՝ որակեալ ձայնագրութեան համար**

- Օգտուէք եռոտանի խցիկից՝ ապարատն անշարժ պահելու համար:
- Վստահացէք, որ առատ լոյս լինի, մասնաւորապէս, եթէ սենեակի մէջ էք:
- Անջատէք սենեակի աղմուկ առաջացնող սարքերը, ինչպիսիք են՝ օդազովացուցիչը, հովահարները, հեռախօսները և այլն:
- Վստահացէք, որ տեսագրման ժամանակ լսելի լինի երաժշտութիւնը (եթէ կայ):

**ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ**

Ելոյթի ընթացքում սփռուող երաժշտութեան, ինչպէս նաև կոմպոզիտորի անունը պէտք է գրուի աշակերտի մասնակցութեան դիմումնագրի վրայ: Եթէ պարի ձևաւորման ու թեմայի կապակցութիւնը դրսևորւում է երգի ընտրութեան միջոցով, դա ևս պէտք է բացատրուի արտիստի կողմից ներկայացուած յայտարարութեան մէջ:

**ՊԱՀԱՆՋՒՈՂ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ**

Աշակերտի մասնակցութեան դիմումնագրի վրայ երաժշտութեան անունը գրելուց բացի, խնդրում ենք գրել պարողների անունները: (Խնդրում ենք ստանալ ծնողի թոյլտուութիւն, եթէ պարի մէջ դերակատար են երեխաները):

## 2009-2010 ԹՈՒԱԿԱՆԻ PTA-Ի «ՌԵՖԼԵՔՇՆ» ԾՐԱԳՐԻ ԿԻՆՕԺԱՊԱՒԷՆԻ ԱՐՏԱԴՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

**Մասնակցութեան ընդհանուր կանոններից բացի, աշակերտը պէտք է հետեւի նաեւ կինօժապաւէնի արտադրութեան հետեւեալ կանոններին՝**

---

### ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Կինօժապաւէնի աշխատանքները պէտք է իրական կամ երեւակայական բովանդակութեամբ և Ռեֆլեքշն ծրագրի ներկայ թեմայի մեկնաբանութեամբ ինքնուրոյն աշխատանք լինեն: Աշխատանքները կարող են ձայն ունենալ կամ չունենալ:

Կինօժապաւէնը ներկայացնող աշակերտը պէտք է լինի դիրեկտորը, բեմագիրը և նկարահանողը: Համակարգիչը օգտագործելու դէպքում, աշակերտը պէտք է կատարի բոլոր աշխատանքը: Եթէ աշակերտը ցանկանում է նկարահանման մէջ ներկայ լինել, ապա նա պէտք է օգտագործի եռոտանի հենակ: Պատմութիւնը յօրինելու և խմբագրելու աշխատանքները պէտք է կատարուեն աշակերտի միջոցով:

Թէ պարզ և թէ բազմատեսակ տեխնիկաներից օգտուելու պարագաներում, աշխատանքները հիմնականում գնահատուելու են, թէ ինչպէս է աշակերտը թեմայի նկարագրութեան համար օգտուել իր արտիստիկ մտապատկերից: Լաւ մշակուած գաղափարը շատ աւելի կարեւոր է քան օգտագործուած տեխնիկաները:

### ԿԱՏԵԳՈՐԻԱ

- **Մուլտիպլիկացիա՝** Մուլտիպլիկացիան կարելի է նկարել՝ առարկաների հաւաքածոյից, կաւից, պատռուած թղթերից և այլն կամ համակարգչի միջոցով յօրինել:
- **Պատմողական՝** Պատմութիւնը պատմել կինօժապաւէնի կամ համակարգչի պատկերների միջոցով: (Սա նոյնը չէ, ինչպէս հեքիաթասութիւնը):
- **Փաստագրական ֆիլմ՝** Վաւերագրական իրական պատմութիւն՝ հիմնուած փաստերի ու պատկերների վրայ և պատմողական ձեւով պատրաստուած:
- **Փորձառական՝** Տեսանիւթ, որն ուսումնասիրում է շարժումները, լոյսը և մտածքը:
- **Լրատուահաղորդակցութիւն՝** Համակարգչի միջոցով լրատուահաղորդակցութիւնն ամբողջովին պէտք է լինի աշակերտի ինքնուրոյն աշխատանքը և աշակերտն ինքը պէտք է կատարի ամբողջ աշխատանքը: Մի տեղից կտրել և այլ տեղ կպցնելը թոյլատրելի չէ:
- **PowerPoint-ի միջոցով ներկայացրած աշխատանքներն ընդունելի չեն:** Աշակերտը պէտք է հետեւի հեղինակային իրաւունքով թեմայի օգտագործման օրէնքին: Համակարգչային ծրագիրը պէտք է օգտագործուի միայն աշակերտի աշխատանքը ներկայացնելու համար: Նկատի ունենալով, որ PowerPoint-ի ներկայացումները հեղինակային իրաւունքով ծրագիր են, ուստի այս ծրագրի օգտագործելը արգելուած է:

### ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

- Տեւողութիւնը չպէտք է հինգ րոպէից աւելի լինի:
- Կինօժապաւէնը պէտք է ուղղակի կապուի թեմային:
- Չի պահանջւում, որ աշխատանքը կատարող աշակերտը երեւայ տեսարանի մէջ:
- Աշխատանքները պէտք է ներկայացնել երկու (2) CD կամ DVD սկաւառակներով:

### ՖՈՐՄԱՏ (Չափը և ձեւը)

- Կատարումները պէտք է ունենան հետեւեալ ֆորմատներից մէկը՝
  - .MPG / .MPEG
  - .MOV / .QT (Quicktime Video)
  - .WMV (Windows Media Video)
- Աշխատանքները պէտք է որպէս DVD/CD file այլ ոչ թէ որպէս DVD/CD movie ներկայացնել:
- Երկու (2) CD կամ DVD սկաւառակները դնել պլաստիկէ կամ խաւաքարէ տուփի մէջ և դրանց վրայ, ինչպէս նաեւ տուփի վրայ գրել աշակերտի անունը, դասարանը, նահանգը և տարեթիւը:
- Երկու (2) CD կամ DVD սկաւառակները դնել մեծ ծրարի մէջ:

- Աշակերտի մասնակցութեան դիմումնագիրը դնել թափանցիկ պահանակի մէջ և դա masking tape-ով փակցնել ծրարի վրայ:
- Ներառել ստեղծագործութեան վերնագիրը կամ անունը և դիմումնագրի միջի արտիստից պահանջուած յայտարարութիւնը: Եթէ ստեղծագործութիւնը վերնագիր կամ անուն չունի գրել «անվերնագիր կամ անանուն»:

## ՑԱՆՑՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՈՐԱԿԵԱԼ ՁԱՅՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

- Օգտուէք եռոտանի հենակից՝ ապարատն անշարժ պահելու համար:
- Վստահացէք բաւարար լոյս լինի, մասնաւորապես սենեակի մէջ տեսագրելիս:
- Մտածէք ձայնի մասին: Անհրաժեշտ դէպքում օգտուէք յաւելեալ բարձրախօսից: Անջատէք աղմուկ առաջացնող սարքերը, ինչպիսիք են՝ օդազովացուցիչը, հովհարները, հեռախօսները և այլն:

## ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

Ելոյթի ընթացքում սփռուող երաժշտութեան, ինչպէս նաև կոմպոզիտորի անունը պէտք է գրուի մասնակցութեան դիմումնագրի վրայ: Եթէ կինոժապաւէնի արտադրութեան ու թեմայի կապակցութիւնը դրսևորւում է երգի ընտրութեան միջոցով, դա ևս պէտք է բացատրուի արտիստի կողմից ներկայացուած յայտարարութեան մէջ:

## ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՒՈՒՆՔՈՎ ԱՅԼ ՆԻՒԹԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Կինոժապաւէնների մէջ կարելի է ներառել հանրային վայրերը, չաւածանօթ-արտադրութիւնները, մակնիշով ապրանքները կամ հեղինակային իրաւունքով այլ նիւթերը պայմանով որ հեղինակային իրաւունքով այդ նիւթերը յատուկ այդ աշխատանքին չեն վերաբերում կամ կազմում են ընդհանուրի փոքրիկ մասնիկը: Աշխատանքի արդիւնքը չի կարող փորձել աշակերտի ու մակնիշով ապրանքի/բիզնեսի/նիւթերի միջև կապակցութիւն ստեղծել կամ այդ մակնիշով ապրանքի գնման կամ չգնման համար ազդեցութիւն թողնել:

## ՊԱՀԱՆՋՈՒՈՂ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Աշակերտի մասնակցութեան դիմումնագրի վրայ երաժշտութեան անունը գրելուց բացի, խնդրում ենք պատասխանել հետևեալ հարցերին:

- Ո՞վ է ձեր կինոժապաւէնի դերակատարը: (Խնդրում ենք ստանալ ծնողի թոյլտուութիւն, եթէ ձեր կինոժապաւէնի մէջ դերակատար են փոքր երեխաները):
- Օգտուե՞լ էք համակարգչից: Եթէ այո, գրէք ծրագրերի անունները:

## 2009-2010 ԹԻԱԿԱՆԻ PTA-Ի «ՌԵՖԼԵՔՇՆ» ԾՐԱԳՐԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՅՕՐԻՆՈՒՄՆԵՐԻ ԿԱՆՈՆՆԵՐ

**Մասնակցութեան ընդհանուր կանոններից բացի, աշակերտը պէտք է հետևի նաև երաժշտական յօրինումների կանոններին՝**

---

### ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Երաժշտական յօրինումները կարելի է ներկայացնել երգի, նուագարանի կամ երգ ու նուագարանի համակցութեամբ։ Երգի պարագայում կարելի է բառերը ներառել կամ չներառել։ Ընդհանուր յօրինումը չպէտք է հինգ րոպէից աւելի երկար լինի։ Աշխատանքը պէտք է կապակցւի Ռեֆլեքշն ծրագրի ներկայի թեմային։

Թոյլատրելի է յօրինումների software-ի օգտագործումը։ Աշակերտները չեն քաջալերւում MIDI sequences կամ audio files օգտագործել։ Բոլոր եղանակները պէտք է նուագել իրական ժամանակով։ Յօրինումները չպէտք է ներառեն MIDI-ի կամ Algorithmic composition software կոչւող համակարգչային ծրագրեր։

Թոյլատրելի է նոտաների software-ի օգտագործումը՝ միաւորներ ստեղծելու և մասերը տպագրելու համար։ Միաւորները ձեռագիր կամ տպագիր ներկայացնելու դէպքում պահանջւում է համապատասխան գործիքաւորում և արտահայտում ներկայացման համար։

Թէ պարզ և թէ բազմատեսակ տեխնիկաներից օգտւելու պարագայում, աշխատանքները հիմնականում գնահատւելու են, թէ ինչպէս է աշակերտը թեմայի նկարագրութեան համար օգտւել իր արտիստիկ մտապատկերից։ Լաւ մշակւած գաղափարը շատ աւելի կարևոր է քան օգտագործւած տեխնիկաները։

### ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ՆՈՏԱՆԵՐ

Աշակերտի նոտաներ ներկայացնելու պարագան որոշւում է իր դասարանի բաժանմունքի կողմից։

- **Տարրական** աշակերտներից նոտաներ չեն պահանջւում։ Կարելի է ներկայացնել Iconic նոտաներ։ Iconic նոտաները յօրինւած նոտաներն են։
- **Նախամիջնակարգի կամ միջնակարգի** աշակերտներից պահանջւում են աւանդական կամ էլեկտրոնիկ երաժշտական գործիքների նոտաներ։ Նոտաները պէտք է ունկնդրողին որպէս ստեղծագործութիւնը հասկանալու ուղեցոյց ծառայեն։

Չափահասները չեն կարող օգնել։ Ֆիզիկապէս թոյլ աշակերտները կարող են մի այլ անձի թելադրել, որ գրի նոտաները։ Նոտաների որակը կամ ճշգրտութիւնը, ինչպէս նաև կատարումը օգնում է երաժշտութեան գաղափարի ըմբռնմանը, սակայն դրանք նկատի չեն առնւում, որպէս գնահատման չափանիշեր։

### ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

- Տևողութիւնը չպէտք է հինգ րոպէից աւելի լինի։
- Ներկայացրէք երաժշտական յօրինումների երկու (2) CD ձայնագրութիւն։
- Աշակերտից չի պահանջւում կատարել իր ստեղծագործութիւնը։
- Աշակերտի յօրինումը կարող է խումբը կատարել։
- Չափը՝
  - Աշխատանքները չպէտք է 11x14 մատնաչափից աւելի մեծ լինեն։
  - Փողային և լարային նուագախմբի ստեղծագործութիւնները կարող են 11 x 16 մատնաչափի լինել։
  - Աշխատանքները չպէտք է փակցւեն։

**ՖՈՐՄԱՏ (Չափը և ձևը)**

- Երկու (2) CD-ի վրայ ձայնագրուած աշխատանքը յանձնել պլաստիկէ կամ խաւաքարտէ ամանով: Թէ CD-ի և թէ ամանի վրայ պէտք է գրել աշակերտի անունը, դասարանը, նահանգը և տարեթիւը:
- CD-ը պէտք է դրուի (քառ պահանջի) մեծ ծրարի մէջ: Գրէք աշակերտի անունը իւրաքանչիւր էջի վրայ, ի դէպ եթէ թերթիկները իրարից բաժանուին:
- Աշակերտի մասնակցութեան դիմումնագիրը դնել թափանցիկ պահարանի մէջ և դա masking tape-ով փակցնել ծրարի վրայ:
- Ներառել ստեղծագործութեան վերնագիրը կամ անունը և դիմումնագրի մէջ արտայայտած պահանջուած յայտարարութիւնը: Եթէ ստեղծագործութիւնը վերնագիր կամ անուն չունի գրել «անվերնագիր կամ անանուն»:

**Յանձնարարութիւններ՝ որակեալ ձայնագրութեան համար**

- Հնարաւորին չափ լուռ պահէք սենեակը, ձայնագրման համար: Փակէք պատուհանները և անջատէք աղմուկ առաջացնող սարքերը, ինչպիսիք են՝ օդազովացուցիչը, հովհարները, հեռախօսները և այլն: Ձայնագրման սարքը մի՛ դրէք նուագարանի կամ բարձրախօսի վրայ:
- Մի՛ ձայնագրէք բարձր ձայնի վրայ (ձայնագրման մեքենայի կարմիր գծի վրայ) կամ շատ նւազ ձայնի վրայ (մինչը հազիւ դարձող):
- Ստուգման իմաստով կարճ ձայնագրէք և լսէք մինչին: Ըստ կարիքի ձայնը բարձրացրէք:
- Դարձրէք CD-ի սկիզբը և երկու վայրկեան անխօս ձայնագրէք ապա սկսէք ձեր յօրինումը նուագել: Ձայնագրութիւնը աւարտէք նորից երկու վայրկեան անխօս ձայնագրութեամբ:

**ՊԱՀԱՆՋՒՈՒՄ Է**

Աշակերտի մասնակցութեան դիմումնագրի վրայ, խնդրում ենք պատասխանել հետևեալ հարցերին՝

- Ո՞վ է կատարել ձեր յօրինումը:
- Արդեօք գործիքաւորումն աւանդական է եղել, կամ թէ, օգտագործել էք սինթեզայզեր:
- Եթէ օգտուել էք MIDI-ից, նշէք թէ ի՞նչ software-ից և hardware-ից էք օգտուել՝ ձեր աշխատանքը յօրինելու համար:
- Եթէ ներառել էք երգի բառեր, դա ինչպէս է համադրուել ձեր ստեղծագործութեանը:

# 2009-2010 ԹՈՒԱԿԱՆԻ PTA-Ի «ՌԵՖԼԵՔՇՆ» ԾՐԱԳՐԻ ԼՈՒՍԱՆԿԱՐԱՀԱՆՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

**Մասնակցութեան ընդհանուր կանոններից բացի, աշակերտը պէտք է հետեւի նաեւ լուսանկարահանման հետեւեալ կանոններին՝**

## ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Լուսանկարային աշխատանքը պէտք է ներկայացնել բնագիր սեւ ու սպիտակ կամ գունաւոր պատկերով կամ մի խումբ պատկերներով՝ լուսանկարահանման ընթացակարգով արտադրուած: Լուսանկարները պէտք է կապակցեն Ռեֆլեքշն ծրագրի ներկայի թեմային:

Լուսանկարները ներկայացնելու համար կարելի է օգտուել այնպիսի տեխնիկաներից, ինչպիսիք են մոնտաժ անելը, բազմակի ցուցադրումը և ֆոտոգրամը: Պատկերները կարող են սովորական կամ դիջիտալ ձեւով ներկայացուել: Պատկերները պէտք է արտացոլեն աշակերտի նկարահանման տեխնիկաների պատշաճ օգտագործումը: Աշակերտները կարող են օգտուել զանազան լինզերից, ֆիլտրներից ու լոյսերից: Լուսանկարների վրայ գծագրական պատկերներ նկարելը, ներառեալ գրելը ընդունելի չէ:

Թէ պարզ և թէ բազմաշերտ տեխնիկաներից օգտուելու պարագայում, աշխատանքները հիմնականում գնահատուելու են, թէ ինչպէս է աշակերտը թեմայի նկարագրութեան համար օգտուել իր արտիստիկ մտայղացումներից: Լաւ մշակուած գաղափարը շատ աւելի կարևոր է քան օգտագործուած տեխնիկաները:

## ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

- Լուսանկարի կամ լուսանկարների հաւաքածոյի (քոլաժ) չափը պէտք է 11 x 14 մատնաչափից աւելի մեծ չլինի, ներառեալ տակդիրը (mat):
- Լուսանկարները դնել թղթի կամ երկտարածական նիւթերի վրայ:
- Բոլոր լուսանկարները պէտք է փակցնել ստուարաթղթի, փայտի կամ որևէ ամուր առարկայի վրայ:
- Աշխատանքը յատուկ թղթով փաթեթաւորելը (shrink-wrap) կամ թափանցիկ պլաստիկով պաշտպանելը թէև ոչ պարտադրական՝, սակայն մեծապէս յանձնարարուում է:
- Ընդունելի չեն շրջանակուած աշխատանքները, նախօրինակ ֆիլմերը (նեգատիւները կամ transparency-ները և բազմատարածական աշխատանքները:
- Տեղադրել մասնակցութեան դիմումնագիրը պաշտպան թղթի մէջ և դա masking tape-ով փակցնել shrink-wrap եղած լուսանկարի ետևը:
- Ներառել ստեղծագործութեան վերնագիրը կամ անունը և դիմումնագրի մէջ արտիստից պահանջուած յայտարարութիւնը: Եթէ ստեղծագործութիւնը վերնագիր կամ անուն չունի գրել «Անվերնագիր կամ անանուն»:

## ՊԱՀԱՆՋՈՒՈՂ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Աշակերտի մասնակցութեան դիմումնագրի մէջ՝

- Գրել աշխատանքի մեծութիւնը ու ծաւալը (ներառեալ տակդիրը):
- Ցանկալի է նշել լուսանկարահանման վայրը և թուականը:
- Բացատրել լուսանկարահանման համար օգտագործուած ապարատը, ինչպէս նաեւ աշխատանքը պատրաստելու պրոցեսը:

## ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՒՈՒՆՔՈՎ ԱՅԼ ՆԻՒԹԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Հեղինակային իրաւունքով նիւթերի օգտագործումը, ներառեալ հեղինակային իրաւունքով մուլտիպլիկացիոյի տիպարները կամ նման նիւթեր ընդունելի չեն լուսանկարահանման աշխատանքի մէջ, բացառութեամբ հետևեալները՝

Լուսանկարների մէջ կարելի է ներառել հանրային վայրերը, լաւածանօթ արտադրութիւնները, մակնիշով ապրանքները կամ հեղինակային իրաւունքով այդ նիւթերը պայմանով որ հեղինակային իրաւունքով այդ նիւթերը յատուկ այդ աշխատանքին չեն վերաբերում կամ կազմում են ընդհանուրի փոքրիկ մասնիկը: Աշխատանքի արդիւնքը չի կարող փորձել աշակերտի ու մակնիշով ապրանքի/բիզնեսի/նիւթերի միջև կապակցութիւն ստեղծել կամ այդ մակնիշով ապրանքի գնման կամ չգնման համար ազդեցութիւն թողնել:

# 2009-2010 ԹՈՒԱԿԱՆԻ PTA-Ի «ՌԵՖԼԵՔՇՆ» ԾՐԱԳՐԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԿԱՆՈՆՆԵՐ

**Մասնակցութեան ընդհանուր կանոններից բացի, աշակերտը պէտք է հետևի նաև գրականութեանը վերաբերող հետևեալ կանոններին՝**

---

## ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Գրական աշխատանքները կարող են լինել իրական կամ առասպել՝ արձակ, չափածոյ կամ թատերգութիւն։ Աշխատանքը պէտք է կապակցուի Ռեֆլեքշն ծրագրի ներկայի թեմային։

Գրական աշխատանքները չպէտք է վերցնել հեղինակային իրաւունքով նիւթերից։

Թէ պարզ և թէ բազմատեսակ տեխնիկաներից օգտուելու պարագայում, աշխատանքները հիմնականում գնահատուելու են, թէ ինչպէս է աշակերտը թեմայի նկարագրութեան համար օգտել իր արուեստի մտապատկերից։ Նաև մշակուած գաղափարը շատ աւելի կարևոր է քան օգտագործուած տեխնիկաները։

## ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

- Աշխատանքը չպէտք է 2,000 բառից աւելի լինի։
- Պահանջւում է աշխատանքի բնագիրը և երկու կրկնօրինակ։
- Աշխատանքը կարելի է ներկայացնել ձեռագիր, կամ գրամեքենայի կամ համակարգչի վրայ մեքենագրուած։
- Ընդունելի են պատկերազարդ աշխատանքները, ներառեալ գրքերը, որոնց պատկերները նկարուած են աշակերտի միջոցով, այդուամենայնիւ այն աշխատանքները կը գնահատուեն միայն իրենց գրական արժէքի համար։
- Ընդունելի չեն բանաստեղծութիւնների կամ կարճ պատմութիւնների հաւաքածու։ Աշակերտը կարող է մէկից աւելի աշխատանք ներկայացնել, սակայն դրանք պէտք է առանձին ներկայացուեն։
- Աշխատանքը պէտք է արտացոլի դասարանի մակարդակի համապատասխան քերականութիւն, կէտադրութիւն և ուղղագրութիւն։

## ՖՈՐՄԱՏ (Չափը և ձևը)

- Աշխատանքները ներկայացնել որևէ տեսակի թղթի վրայ, պայմանով որ 8 1/2 X 11 չափից աւելի մեծ չլինի։
- Աշխատանքի բնագիրը և երկու կրկնօրինակները յանձնել «մանիլա» թղթածրարով և ծրարի ետևում կպցնել աշակերտի մասնակցութեան դիմումնագիրը կամ բոլոր նիւթերը դնել թափանցիկ պահանակի մէջ։
- Մի՛ փակցրէք աշխատանքները։
- Թերթիկի երկու կողմերի վրայ մի՛ տպագրէք։
- Աշակերտի անունը գրել իւրաքանչիւր էջի ետևում, ի դէպ եթէ թերթիկները իրարից բաժանուեն։
- Համարակալել բոլոր էջերը։
- Ներառել աշխատանքի վերնագիրը կամ անունը և դիմումնագրի միջի արտիստից պահանջուած յայտարարութիւնը։ Եթէ ստեղծագործութիւնը վերնագիր կամ անուն չունի գրել «անվերնագիր կամ անանուն»։

## ԹԵԼԱԴՐԵԼ ԵՒ ՄԵՔԵՆԱԳՐԵԼ

- Աշակերտը կարող է ուրիշի միջոցով մեքենայագրել իր աշխատանքները՝ պայմանով, որ կցի իր աշխատանքի բնագիրը կամ պատճէնը։
- Ինչպէս թոյլ աշակերտները կամ մանկապարտէզի և առաջին դասարանի աշակերտները կարող են թելադրել մի այլ անձի, որը կարող է մեքենայագրել կամ գրել բնագիրը։
- Արտագրողը պէտք է ամեն տեսակ ջանք գործադրի, հարազատ մնալու աշակերտի լեզուին ու ոճին, այնպէս ինչպէս արտացոլում է աշակերտի բնագիր աշխատանքը։

## ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

- Անգլերէնը իր մայրենի լեզուն չլինելու պարագայում, աշակերտը կարող է իր աշխատանքը ներկայացնել իր մայրենի լեզուով։ **Թարգմանութեանը պէտք է կցուի մայրենի լեզուով բնագիրը։**
- Թարգմանիչները պէտք է ոչ մի ջանք չխնայեն հարազատ մնալու աշակերտի լեզուի մակարդակին և ոճին, այնպէս ինչպէս բնագիրն է։

# 2009-2010 ԹՈՒԱԿԱՆԻ PTA-Ի «ՌԵՖԼԵՔՇՆ» ԾՐԱԳՐԻ ՏԵՍՈՂԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԻ ԿԱՆՈՆՆԵՐ

**Մասնակցութեան ընդհանուր կանոններից բացի, աշակերտը պէտք է հետևի նաև տեսողական արուեստի հետևեալ կանոններին՝**

---

## ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Տեսողական արուեստի աշխատանքները լինեն դրանք դրոշմելու, նկարչութեան, գեղանկարչութեան, քոլաժի (ժողովածու), լուսանկարների ժողովածուի, մեքենայի փորագրման կամ ծակածշագործութեան, մանրաթելագործութեան կամ համակարգչի միջոցով արուեստական աշխատանքներ, պէտք է ներկայացուեն բնագիր ձևով և պէտք է կապակցուեն Ռեֆլեքշն ծրագրի ներկայի թեմային:

Թէ պարզ և թէ բազմատեսակ տեխնիկաներից օգտուելու պարագայում, աշխատանքները հիմնականում գնահատուելու են, թէ ինչպէս է աշակերտը թեմայի նկարագրութեան համար օգտուել իր արտիստիկ մտապատկերից: Լաւ մշակուած գաղափարը շատ աւելի կարևոր է քան օգտագործուած տեխնիկաները:

## ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

- Բոլոր աշխատանքները պէտք է ներկայացնել հարթ և ոչ աւելի քան 3/8 մատնաչափ հաստութեան մակերեսով: Սա ներառում է երկչափական բոլոր նիւթերը և պատկերները ներառեալ փոքր, տափակ իրերը, ինչպիսիք են թէլը, կոճը և այլն: Եռաչափական աշխատանքները չպէտք է իրենց մակերեսից աւելի տեղ գրաւեն, ներառեալ մակարոնները, լոբիները, ուլունքները և տուփերը:
- Աշխատանքը չպէտք է 24 x 30 մատնաչափից աւելի մեծ լինի ներառեալ տախտակը (mat):
- Աշխատանքը պէտք է ներկայացուի թղթի, կտաւատախտակի, ստուարաթղթի, տաք կամ պաղ press board-ի, կամ կտաւի վրայ (ոչ աւելի քան 3/8 մատնաչափ հաստութեամբ):
- Թղթի կամ կտաւի վրայ կատարուած աշխատանքները փակցնել ամուր ստուարաթղթերի տախտակի վրայ այլ ոչ թէ փայտէ, մետաղէ, պլաստիկէ կամ ապակէ շրջանակների վրայ:
- Աշխատանքը յատուկ թղթով փաթեթաւորելը (shrink-wrap) կամ թափանցիկ պլաստիկով պաշտպանելը, թէև ոչ պարտադրական՝ սակայն մեծապէս յանձնարարուում է:
- Lamination-ը թոյլ չի քաջալերւում, քանի որ դա կարող է մշտականապէս վնասել գեղարուեստական աշխատանքի մակերեսը:
- Տեղադրել մասնակցութեան դիմումնագիրը պաշտպան թղթի մէջ և դա masking tape-ով փակցնել shrink-wrap եղած աշխատանքի ետևը:
- Ներառել ստեղծագործութեան վերնագիրը կամ անունը և դիմումնագրի մէջ արտիստից պահանջուած յայտարարութիւնը: Եթէ ստեղծագործութիւնը վերնագիր կամ անուն չունի գրել «անվերնագիր կամ անանուն»:

## ՊԱՀԱՆՋՈՒՈՂ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Աշակերտի մասնակցութեան դիմումնագրի վրայ բացատրէք ձեր աշխատանքի մեծութիւնը, ծաւալը և տարածութիւնը, ինչպէս նաև օգտագործուած նիւթը (քրեան, իւղաներկ կտաւի վրա և այլն):

## ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ՈՐՈՆՔ ՉԵՆ ԸՆԴՈՒՆՈՒՈՒՄ

- Արձանագործութիւն, բրուտագործութիւն, ոսկերչութիւն, կամ եռաչափ գեղարուեստական այլ աշխատանքներ:
- Գեղարուեստական այլ աշխատանքների վերարտադրելը կամ չափը մեծացնելը:

## ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՒՈՒՆՔՈՎ ԱՅԼ ՆԻՒԹԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Հեղինակային իրաւունքով նիւթերի օգտագործումը, ներառեալ հեղինակային իրաւունքով մուլտիպլիկացիայի տիպարները կամ նման նիւթեր ընդունելի չեն տեսողական արուեստի աշխատանքի մէջ, բացառութեամբ հետևեալները՝

Տեսողական արուեստի մէջ կարելի է ներառել հանրային վայրերը, լաւածանօթ արտադրութիւնները, մակնիշով ապրանքները կամ հեղինակային իրաւունքով այլ նիւթերը պայմանով որ հեղինակային իրաւունքով այդ նիւթերը յատուկ այդ աշխատանքին չեն վերաբերում կամ կազմում են ընդհանուրի փոքրիկ մասնիկը: Աշխատանքի արդիւնքը չի կարող փորձել աշակերտի ու մակնիշով ապրանքի/բիզնեսի/նիւթերի միջև կապակցութիւն ստեղծել կամ այդ մակնիշով ապրանքի գնման կամ չգնման համար ազդեցութիւն թողնել: